ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

4 նոյեմբերի 2020թ. N 276-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԽՃՈՒՂՈՒ N 40 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՊԱՀԵՍՏԻ ՇԵՆՔԻ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԻ ՀՈՂԱՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ, ԱՅԴ ՀՈՂԱՄԱՍԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 29.09.2020 Թ. N 253-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ և 16-րդ մասերով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, հիմք ընդունելով Կեչուտ գյուղի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1993 թվականի հունիսի 29-ի որոշումը և հաշվի առնելով Կեչուտ գյուղի բնակիչ Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանի դիմումները (մտից N 1158, 28.09.2020 թ. և մտից N 1278, 04.11.2020 թ.)՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Վերականգնել Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանին Կեչուտ գյուղի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 1993 թվականի հունիսի 29-ի որոշմամբ (Արձանագրություն թիվ 31, հիմք՝ Կեչուտ գյուղի վարչական ղեկավարի կողմից տրամադրված քաղվածք) սեփականաշնորհված հացահատիկի պահեստի շենքի (այսուհետ՝ շինություն) պահպանման ու սպասարկման համար առանձնացված, Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղու N 40 հասցեում գտնվող հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 10-002-0458-0005) հողհատկացման հիմքերը՝ 455,1 քմ մակերեսի չափով:

2. Հաշվի առնելով, որ սույն որոշման 1-ին կետում նշած հողամասը ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի սահմանափակումների ցանկում և հիմք ընդունելով Կեչուտ գյուղի բնակիչ՝ սույն որոշման 1-ին կետում նշված հասցեում գտնվող շենքի սեփականատեր Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանի կողմից հողամասի կադաստրային արժեքն ամբողջությամբ՝ միանվագ վճարելու փաստը (հողամասը գտնվում է Վայոց ձորի մարզի տարածագնահատման 11-րդ գոտում, կադաստրային արժեքը՝ 368 631 (երեք հարյուր վաթսունութ հազար վեց հարյուր երեսունմեկ) դրամ)՝ ճանաչել նրա սեփականության իրավունքը հողամասի նկատմամբ:

3. Ուժը կորցրած ճանաչել Ջերմուկ համայնքի ղեկավարի 2020 թվականի սեպտեմբերի 29-ի «Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի բնակիչ Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանին սեփականաշնորհված շինության զբաղեցրած հողամասը ուղղակի վաճառքով օտարելու մասին» N 253-Ա որոշումը:

4. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի Կոմիտեի ստորաբաժանման կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ռոստոմ Ռաֆիկի Եղիազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 նոյեմբերի 4
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 նոյեմբերի 2020թ. N 277-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԱՆՉԱՓԱՀԱՍ ԲՆԱԿԻՉ ԷԼԵՆ ՎԱՉԻԿԻ ԱՎԱԳՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹՅՈՒՆԸ ԴԱԴԱՐԵՑՆԵԼՈՒ ԵՎ ՀՈԳԱԲԱՐՁՈՒ ՀԱՅԿՈՒՀԻ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 41-րդ հոդվածի 1-ին մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունիսի 2-ի N 631-Ն որոշման, Խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 2020 թվականի նոյեմբերի 5-ի N 5 արձանագրության, հիմք ընդունելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Նունիկ Ստեփանյանի դիմումը (մտից՝ 2020 թվականի նոյեմբերի 3-ի N 1276) **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաշվի առնելով Ջերմուկ համայնքի ղեկավարին կից գործող խնամակալության և հոգաբարձության հարցերով հանձնաժողովի եզրակացությունը՝ Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի անչափահաս բնակիչ Էլեն Վաչիկի Ավագյանի (ծնված՝ 2005 թվականի դեկտեմբերի 9-ին) նկատմամբ սահմանված հոգաբարձությունը դադարեցնել և հոգաբարձու Հայուհի Վաչիկի Ավագյանին ազատել հոգաբարձուի պարտականութ–յունների կատարումից:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայուհի Վաչիկի Ավագյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 նոյեմբերի 6
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2020թ. N 278-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,03877 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Հերհեր գյուղում գտնվող 0,03877 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ այլ, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 նոյեմբերի 9
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2020թ. N 279-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ 0,27656 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՈՐՊԵՍ ԱՌԱՆՁԻՆ ԳՈՒՅՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 24-րդ կետով **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի սեփականություն հանդիսացող Հերհեր գյուղում գտնվող 0,27656 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը, հողատեսքը՝ վարելահող, ճանաչել որպես առանձին գույքային միավոր և ներկայացնել իրավունքի պետական գրանցման:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ Կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 նոյեմբերի 9
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

9 նոյեմբերի 2020թ. N 280-Ա

ԱՇՈՏ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՏԵՂԱԿԱԼ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածի 3-րդ մասի հիման վրա **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի տեղակալ նշանակել Աշոտ Լավրենտիի Խաչատրյանին:

2.Պարտականությունների սահմանումը՝ ըստ աշխատանքային պայմանագրի, աշխատավարձը՝ ըստ Ջերմուկ համայնքի ավագանու 2020 թ. հունվարի 17-ի N 4-Ա որոշմամբ հաստատված հաստիքացուցակի, աշխատանքի սկիզբը՝ նոյեմբերի 10-ը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

2020 նոյեմբերի 9
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 նոյեմբերի 2020թ. N 281-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ՋԵՐՄՈՒԿԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԿԱԳ ԲԱԺՆԻ ՊԵՏ Լ. Ս. ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄՆ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 5-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման համակարգող նախարարի 2006 թվականի սեպտեմբերի 11-ի «Համայնքային ծառայողի ատեստավորման կարգը սահմանելու մասին» N 15-Ն հրամանի հավելվածի 8-րդ կետը՝ **ո ր ո շ ու մ եմ՝**

1. Հաշվի առնելով, որ Ջերմուկի համայնքապետարանի աշխատակազմի ՔԿԱԳ բաժնի պետ Լուսիկ Սարիբեկի Սաղաթելյանը Ջերմուկ համայնքի ղեկավարի 06.11.2020 թ. N 180 կարգադրության համաձայն գտնվում է արձակուրդում՝ նախապես սահմանված ատեստավորման օրը տեղափոխել՝ այն անցկացնելով 2020 թվականի դեկտեմբերի 4-ին, ժամը 11.00-ին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ՔԿԱԳ բաժնի պետ Լ. Ս. Սաղաթելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՐԴԱՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**

2020 նոյեմբերի 12
Ջերմուկ